ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.07.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/180

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.07.2021թ. թիվ 26/26/11047-2021 գրությամբ «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 06.07.2021թ. թիվ ՊՆ/02/3433-2021 գրության հիման վրա, 07.07.2021թ. թիվ 26/26/11047-2021 գրությամբ նախաձեռնել է «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/180 ընթացակարգի շրջանակներում 13.07.2021թ. ժամը 09:30-ին և 22.07.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնացությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.07.2021թ. թիվ ՊՆ/02/3433-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ի՝ հայտով ներկայացված հավելված 1.1-ում 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքների ԳՈՍՏ-ը և տեսակը չեն համապատասխանում ՀՀ ՊՆ կարիքների համար պահանջվող, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների ԳՈՍՏ-ին և տեսակին, ինչպես նաև 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների գույները, չեն համապատասխանում հրավերով սահմանված գույներին: Միաժամանակ հավելված 1.1-ում 8-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «կամ համարժեք» արտահայտությունը:

Գնահատող հանձնաժողովն առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցն արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չի շտկել: Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը մերժել է «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ի հայտը:

Կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/180 ընթացակարգի շրջանակներում 13.07.2021թ. ժամը 09:30-ին և 22.07.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/180 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/180 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքների ԳՈՍՏ-ը և տեսակը չեն համապատասխանում ՀՀ ՊՆ կարիքների համար պահանջվող, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների ԳՈՍՏ-ին և տեսակին, ինչպես նաև 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների գույները, չեն համապատասխանում հրավերով սահմանված գույներին: Միաժամանակ հավելված 1.1-ում 8-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «կամ համարժեք» արտահայտությունը: Քանի որ առարակայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջերին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը

առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 28.06.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկումներ չի ներկայացվել և որոշում կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.07.2021թ. թիվ 26/26/11047-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.07.2021թ. թիվ ՊՆ/02/3433-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը ***կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը</u>***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքների ԳՈՍՏ-ը և

տեսակը չեն համապատասխանում ՀՀ ՊՆ կարիքների համար պահանջվող, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների ԳՈՍՏ-ին և տեսակին, ինչպես նաև 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների գույները, չեն համապատասխանում հրավերով սահմանված գույներին: Միաժամանակ հավելված 1.1-ում 8-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «կամ համարժեք» արտահայտությունը: Քանի որ առարակայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջերին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 28.06.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկումներ չի ներկայացվել և որոշում կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, 2-5-րդ և 8-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է հետևյալ տեսքով.

չ/հ	**անվանումը**	**տեխնիկական բնութագիրը**
2.	ներկ՝ կանաչ, ՆՑ-132 (Ներկ կանաչ ՆՑ-132)	համաձայն ***ԳՕՍՏ 6631-74*** պահանջների: Տեսակը ՆՑ-132Պ, գույնը կանաչ, պայմանական մածուցիկությունը 60-100ս, հրավտանգ, մետաղական մինչև 50լ. տարայով, պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:
3.	ներկ՝ սպիտակ, ՆՑ-132 (Ներկ սպիտակ ՆՑ-132)	համաձայն ***ԳՕՍՏ 6631-74*** պահանջների: Տեսակը ՆՑ-132Պ, ***գույնը սպիտակ***, պայմանական մածուցիկությունը 60-100ս, հրավտանգ, մետաղական մինչև 50լ.

		տարայով, պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից ոչ պակս 12 ամիս:
4.	ներկ՝ կարմիր, ՆՑ-132 (Ներկ կարմիր ՆՑ-132)	համաձայն ***ԳՕՍՏ 6631-74*** պահանջների: Տեսակը ՆՑ-132Պ, ***գույնը կարմիր***, պայմանական մածուցիկությունը 60-100ս, հրավտանգ, մետաղական մինչև 50լ. տարայով, պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:
5.	ներկ՝ սև, ՆՑ-132 (Ներկ սև ՆՑ-132)	համաձայն ***ԳՕՍՏ 6631-74*** պահանջների: Տեսակը ՆՑ-132Պ, ***գույնը սև***, պայմանական մածուցիկությունը 60-100ս, հրավտանգ, մետաղական մինչև 50լ. տարայով, պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:
8.	Ուայթ սպիրիտ (լաքային բենզին) (ՈՒայտ-սպիրիտ)	Ուայթ-սպիրիտ (նեֆրազ C4 150/215) տեխնիկական ցուցանիշներով, ՏՈւ-0251-001-72021999-2006, կամ համարժեք տեխնիկական պայմաններով, հրավտանգ, մետաղական մինչև 200լ տարայով, պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ն նշված չափաբաժինների մասով Հավելված N 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ներկայացրել է հետևյալ տեսքով.

Հավելված 1.1
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8»* **ծածկագրով**
գնանշման հարցման հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՋԵՆԵՐԱԼ ԲԻԼԴԵՐ» ՍՊԸ -ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8»*
մասնակցի անվանումը

ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
1		
2	«Բելկոլոր» ՍՊԸ ՌԴ	ԳՕՍՏ 51691 Տեսակը ՆՑ-132, գույնը կանաչ, պայմանական մածուցիկությունը 60-100ս, հրավտանգ, մետաղական մինչև 50լ. տարայով, պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից 12 ամիս:
3	«Բելկոլոր» ՍՊԸ ՌԴ	ԳՕՍՏ 51691 Տեսակը ՆՑ-132, գույնը կանաչ, պայմանական մածուցիկությունը 60-100ս, հրավտանգ, մետաղական մինչև 50լ. տարայով, պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից 12 ամիս:
4	«Բելկոլոր» ՍՊԸ ՌԴ	ԳՕՍՏ 51691 Տեսակը ՆՑ-132, գույնը կանաչ, պայմանական մածուցիկությունը 60-100ս, հրավտանգ, մետաղական մինչև 50լ. տարայով, պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից 12 ամիս:
5	«Բելկոլոր» ՍՊԸ ՌԴ	ԳՕՍՏ 51691 Տեսակը ՆՑ-132, գույնը կանաչ, պայմանական մածուցիկությունը 60-100ս, հրավտանգ, մետաղական մինչև 50լ. տարայով, պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից 12 ամիս:
8	Արիկոն ՍՊԸ ՌԴ	Ուայթ-սպիրիտ (նեֆրազ C4 150/215) տեխնիկական ցուցանիշներով, ՏՈւ-0251-001-72021999-2006, կամ համարժեք տեխնիկական պայմաններով, հրավտանգ, մետաղական մինչև 200լ տարայով, պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի շտկել, որը հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրով

ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.07.2021թ. թիվ 26/26/11047-2021 գրությամբ «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ջեներալ Բիլդեր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**